թեամբ: Տիգրան Մեծի ոգին եւ նրա տուած թափը հայոց աշխարհին քիչ է հասկցուել եւ շուտ է մոռացուել. մինչդեռ հէնց նրա օրօք էր, որ մեր ցեղի զարկերակը ամենէն աւելի առողջ եւ ուժգին ռիթմ ունէր: Հապա մեծ Արշակունինե՞րը, Արշակ, Պապ...

Ինչպէս ասացի արդէն, չկայ մի պատմութիւն աւելի մեծ իր յեղյեղումներով, աւելի ողբերգական իր տագնապներով, աւելի յուզիչ իր դրուագներով՝ քան մերը:

Ի՛նչ վատ է աւանդուել մեր պատմութիւնը...

Զ.

ԿՐԿՆՒՈ՞ՒՄ Է ԱՐԴԵՕՔ ՊԱՏՄՈՒԹԻՒՆԸ

Հին ու դժնդակ հարց է այս եւ միշտ էլ տարբեր պատասխաններով՝ ըստ տեղի եւ ըստ ժամանակի պայմանների:

Կրկնւում է այս թշուառական պատմութիւնը այն չափով, ինչ չափով որ այն կերտող մարդ արարածը իր կոյր կրքերով, իր յոյզերով, իր մերթ աւերիչ, մերթ շինարար բնազդներով, մերթ իր հոգու հարստութեամբ եւ մերթ իր նզովուած նիւթի կատաղութեանը գերի կրկնւում է որպէս հասարակական գործօն: Աւերիչ ու անսանձ մրրիկներ ու փոթորիկներ եւ այնքան անագորոյն փլուզումներ յաջորդում են իրար, ինչպէս եւ պայծառ չքնաղ արշալոյսներ միեւնոյն բնութեան յաւիտենապէս ալեկոծ ծոցից:

Զգիտեմ այլ ժամանակներին, բայց այս անցեալ պատերազմով, թւում է թէ, մեր շըշմած հայեացքի առջեւ երկու հազար տարի առաջ կատարուած անցքերը եկան նորից յեղյեղուելու, որպէսզի դարերի թմբիրից ըմբոստ նոր սերունդները կեանքի ու մարդկային ճակատագրի ողջ սարսուռն ապրեն:

Արդարեւ, Հայաստանի եւ Հռոմի առաջին բախումը եւ առհասարակ այն ժամանակներում Արեւելքի եւ Արեւմուտքի փոխադարձ յարաբերութիւնների զարգացումը վհատեցուցիչ կերպով յիշեցնում է մեր օրերի մեծ իմպերիալիստ պետութիւնների եւ փոքր ու ինքնուրոյնութեան ձգտող ազգերի քաղաքական ու տնտեսական փոխյարաբերութիւնները:

Մէկդի դնենք պատմութեան կրկնութեան հարցը, բայց տեսնելուց յետոյ այն բոլորը, ինչ որ մենք տեսանք ու ապրեցինք, ինչպէ՞ս չասենք տրտմօրէն ու հոգեմաշ դառնութեամբ, թէ երեւի երկու հազար տարուայ բարձր քաղաքակրթութիւնը Մեծ Խաչուածի սքանչելի վարդապետութեան թեւերի վրայ բնաւ բաւարար չէ եղած մարդկութիւնը մաքրելու իր նախնական մեղքի թանձրութիւնից, իր անասնական բնութեան ախտաճարակ պոռթկումներից (ատաւիզմ), որոնք մարդկային ծովի մակընթացութեան ու տեղատուութեան պէս արիւնի յորձանքներով բարձրանում են ու իջնում, դաշտանում: Դրէ՛ք Հռոմի տեղ այսօրուայ մեծ պետութիւնները, իրենց ընչաքաղց ձգտումներով, իրենց նենգ, դաւադիր քաղաքականութեամբ, իրենց աւարառու, գիշատիչ գործելակերպով, իրենց բոլոր ռազմական կատարելագործութեամբ ու կարողութեամբ ընդդէմ յետամնաց կամ պարզապէս թուով նուազ ժողովուրդների, եւ պատկերը լիակատար կը լինի:

Անշուշտ քսան դար եւ աւելի սրանից առաջ Հռոմ եւ հռոմայեցի անունը թնդում էր համայն Արեւելքում, ինչպէս նոր ժամանակներում Եւրոպա եւ եւրոպացու անունը: Հին օրերում Արեւելքում, հռոմայեցի ասելով հասկանում էին ոչ միայն ոյժ, զօրութիւն, զինուորական անպարտելի կարողութիւններ, հապա եւ փիլիսոփայութիւն, դպրութիւն, բարձր արուեստներ, մի խօսքով՝ քաղաքակրթութիւն եւ մանաւանդ՝ օրէնք եւ արդարութիւն, որ այնքան հրապոյր ու մեծութիւն էր տալիս հեռաւոր Արեւմուտքում բարձրացած այս դարմանահրաշ կայսրութեանը:

Նոյնն էր նախ քան մեծ պատերազմը արեւելեան ժողովուրդների համար եւրոպացու անունը, որին կապուած էր միշտ ոչ միայն բարեկրթութեան, կիրթ ճաշակի, խելքի եւ ռազմական զօրութեան հասկացողութիւնը, ապա եւ մի ուրիշ բան որ դժուար է սահմանել, որ Եւրոպայի խորհրդաւոր, կախարդական իմաստն է եւ որ նրա երեւալուց առաջ արդէն բարոյապէս ընկճում ու իշխում էր Ասիայի մէկ ծայրից միւսը:

Այս դժուար սահմանելի, անորոշ, գրեթէ խորհրդաւոր յատկութիւնը եւրոպացու — ինչպէս հնում հռոմայեցու — մարդկային կա-